

**Հայտարարվում է մրցույթ Արմավիրի մարզի <<Ծաղկալանջի  
միջնակարգ դպրոց ՊՈԱԿ>>-ի մաթեմատիկա առարկայի (5 ժամ)  
ուսուցչի թափուր տեղի համար**

Ուսուցչի վարձատրությունը՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքներն և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարի:

Մրցույթին մասնակցելու համար անձը տնօրենի կողմից նշանակված աշխատակցին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն թափուր տեղի անվանումը, որին հավակնում է (Ձև 1),

2) Փաստաթուղթը (դիպլոմ)՝ << Հանրակրթության մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի համապատասխան որակավորման վերաբերյալ,

3) անձնագրի պատճեն,

4) ինքնակենսագրություն (Ձև 4),

5) <<Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26 – րդ հոդվածի 1 – ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում ,

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը,

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ,

9. Հրատարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր՝ առկայության դեպքում,

10. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթղթեր:

Փաստաթղթերն ընդունվում են 2024 թ. փետրվարի 22 -ից մինչև 2024 թ. մարտի 6 -ը ներառյալ, ամեն օր ժամը 10.00-ից մինչև 15.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը կկայանա 2024 թ. մարտի 13 -ին, ժամը՝ 14.00 – ին , Ծաղկալանջի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել **094-72-88-44** հեռախոսահամարով: